ԽՈՒՃԱՊԻ ՎԱՆՔ

Մալականաբնակ Պրիվոլնոյե գյուղից 25 կմ հյուսիս, Լալվարի հյուսիսարևմտյան փեշին, Խորակերտի վանքից ոչ հեռու. Վրաստանի Մառնեուլի շրջանի հայկական Ախքորփի գյուղից 2 կմ հարավ-արևմուտք, ընդարձակ բացատում ժամանակների արհավիրքին դիմակայում է Խուճապի վանական խոշոր հաստատությունը: Սրբատաշ քարով շարված, արտաքին ճոխ հարդարանքով գմբեթակիր գլխավոր եկեղեցին, միանավ սրահը, շրջապարիսպն ու այլ շինություններ ներկայումս կիսավեր են:

Մենաստանը երկար ժամանակ եղել է հյուսիսային Հայաստանի հայ քաղկեդոնիկների խոշոր կենտրոններից, թերևս երկրորդը՝ Ախթալայից հետո: Այստեղ, այս խաղաղ պայմաններում կուսանոց էր մինչև 1970-ական թվականները, հուշարձանների որմերին վիմագրեր չեն նկատվել:

1184. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ, ձեռքերը կրծքին խաչած ննջեցյալի հարթաքանդակի գլխավերևում, 5 տող.

ԱՅՍ է ՏԱՊԱՆ Ա
ԻԱՆԻ ՈՐԴԻ ԱՐ
ՈՒԹԻՆ, ՈՐ ՓԼՈՅԽԵՑԱՒ
ԱՌ ԱՀ ԹՎԻՆ
ՌՃՀԶ (1727):

Ծանոթ. Տապանաքարն ընկած է Խուճապի վանքի գլխավոր եկեղեցու մեջ, բերված է այլ տեղից:

ՄԵԾԱՎԱՆ

Աշոցքի ամենամեծ գյուղն է: Ըստ Ե. Լալայանի՝ XIX դ. սկզբից եղել է Մելիք Շահնազարի ամառանոցը և վերաբնակեցվելով՝ կրել է նրա անունը: Բնակավայրի հարավարևելյան մասում պահպանվում են V-VI դդ. վանքի ավերակներ (երկու եկեղեցի, գերեզմանոց, պարսպի մնացորդներ): Պ. Մուրադյանը կարծում է, որ գյուղն սկզբնապես պետք է որ կոչված լինի Խոշավանք:[111]

Մեծավան-Խոշավանում եկեղեցի է կառուցվել Կյուրիկյան Աբաս թագավորի օրոք՝ 1095 թ., ինչպես և Թամար թագուհու որդի Գեորգի-Լաշայի թագավորության տարիներին՝ 1220-30-ական թվականներին, որոնց մասին տեղեկացնում են տեղի վրացերեն արձանագրությունները:[112]

Մեծավանը նշանակալի դեր է խաղացել Աշոցք գավառի վարչական, հոգևոր և պաշտպանական կյանքում:

XIX դ. և վերջին տարիների ընթացքում գյուղի երկու եկեղեցիները նորոգվել են կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդների կողմից:

---

[111] *Պ. Մուրադյան,* ՀՎԱ, էջ 151:
[112] Նույն տեղում, էջ 153-160:

1185. ԵԿԵՂԵՑԻ. որմին, 1 տող.

ՍԲ ՅՈՀԱՆՆԷՍ:

Հրատ. Գ. Շախկյան, Լոռի, 24:

Ծանոթ. Հովհաննես Սկրտչի անվանագիրը փորագրված է XIX դ. վերանորոգության ժամանակ:

1186. ՏԱՊԱՆԱՔԱՐ. եկեղեցու շրջապատի գերեզմանոցում.

Այս է հանգիստ Մանկասարին: [Թվին] ՌՆԺ (1661):

Հրատ. Մուրադյան, ՀՎԱ, 151:

Ծանոթ. Պ. Մուրադյանի հավաստմամբ՝ այստեղ է նաև Ակոբի 1716 թ. տապանագիրը (նույն տեղում), իսկ Ս. Հովհաննես եկեղեցու մոտ «թաղված է 1853 թ. վախճանված Տէր Մխիթար Գերանուանի» վարդապետը (ՀՎԱ, 152): Կան նաև վրացերեն արձանագրություններ:

ՍԱՄՑԵՎՐԻՍ

Եռազգ բնակչությամբ փոքրիկ գյուղ է Վրաստանի Բոլնիս քաղաքից հարավ-արևմուտք, հայաստանամերձ անտառի փեշին: Տեղանքին քաջածանոթ Ավետիք Ենգոյանը տևական պրպտումների շնորհիվ պարզել է, որ այդ տարածքի ծորակներում, հարթավայրերում, առվակների եզրերին ու լեռնածերպերին կան լքված-ամայացած բնակատեղիներ, ամրոցներ (Շանշիղուլա), եկեղեցիներ ու գերեզմանոցներ, որոնք վկայում են մինչև XVII դ. վերջերը հայերով բնակեցված լինելու մասին: Այնուհետև, XVIII դ. սկսած ներգաղթող հայերը վերաբնակվել են հին գյուղերում կամ հիմնարկել նորերը, որոնցում դեռ ապրում են հայալեզու կամ ազգությունն իսպառ մոռացած նրանց ժառանգները:

Սամցեվրիս գյուղի հարավային եզրում կանգուն է եռահարկ մի շինություն՝ շրջապատված ընդարձակ գերեզմանոցով: Անկանոն քարով շարված կառույցը տեղացիները կոչում են զանգակատուն: Դրա առաջին հարկը երկու կամարների վրա նստող թաղով աղոթարան է, երկրորդը՝ նույնպես, իսկ երրորդ հարկաբաժինը բազմանիստ ութ սյուներով, աղյուսաշար նիստերով զանգակատունն է:

1187. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ. սյան խոյակին, գեղագիր.

ՍԱՐ[ԳԻ]Ս:

Ծանոթ. Շինարար վարպետի անվանագիրն է: Հավանաբար նա 1652 թ. Սանահնի վանքը վերանորոգող ուստա Սարգիսն է, որն իր ժամանակակից, Հաղբատավանքը նորոգող Նավասարդ Առնջեցի շինարար-ճարտարապետի հետ եկեղեցական շինարարություն է ծավալել մոտակա Շուլավերի և Բոլնիսի շրջաններում: